Jurisprudentia Sinica

Selipsfkie Quellenuyperuyszete

372
Ł-21

1915

378
Ժ-21

0120-10

ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ

ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ
Էլեֆտրաւարժ Տպարան Մայր Աթոռոյ
1915

372
Ժ-21

8129
Ֆ-21
25 APR 2013
Ֆ-21
Ֆ-21
31874

ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ

ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀԱՍՀ СССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀԱՅԿ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.Հ Публичная Библиотека
7/XI 1922
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Էջմիածնի Տպարան Մայր Աթոռոյ
1915

50.328

Հաստատեմ զայս ժամանակաւոր Ներքին Կանոնադրութիւն եկեղեցական-ծխական դպրոցաց Հայոց եւ տամ ի գործադրութիւն.

ԳԷՈՐԳ Ե.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

յ7 Ապրիլի 1915 ամի
Ս. Էջմիածին

ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ
ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ
ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ

Ա.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ.

1. Հայոց եկեղեցական-ծխական դպրոցները բացւում են քաղաքներում և գիւղերում, ծխական համայնքների մէջ, և վանքերին կից, երկու սեռի մանուկներին կրթութիւն և կարևոր գիտելիքներ տալու համար։

2. Եկեղեցական-ծխական դպրոցների բացումը հաստատւում է Ամենայն Հայոց Կաթուղիկոսի Կոնդակով և դպրոցները կառավարւում են համաձայն այս ժամանակաւոր ներքին կանոնադրութեան։

Ծանօթ. Ծխական համայնքը նոր դպրոց բանալու համար պէտք է որոշէ դպրոցի պահպանութեան աղբիւրներն և ներկայացնէ թեմական իշխանութեան։

3. Եկեղեցական-ծխական դպրոցները երկու կարգի են.—միդասեան՝ մինչև չորսամեայ դասընթացով և երկդասեան՝ մինչև վեցամեայ դասընթացով։

Ծանօթ. Ծխական համայնքները կարող են դպրոցներին կից բանալ և մանկական պարտէզներ։

4. Մի քանի ծխական համայնքներ կարող են միացեալ ուժերով մի կենտրոնական եկեղեցական-ծխական դպրոց պահել այնտեղ, որտեղ յարմար կդատեն այդ համայնքները։

5. Եկեղեցական-ծխական դպրոցները լինում են՝ աղջիկաց, օրիորդաց կամ խառն։

6. Եկեղեցական-ծխական դպրոցի պահպանութեան աղբիւրներն են.

ա. Տարեկան նպաստ եկեղեցիներից, ուխտատեղերից և վանքերից.
բ. Ծխական տուրք (դրամով կամ բերքով մշտական կամ միանուագ).
գ. Աշակերտների թոշակ,
դ. Համայնական եկամուտներ (ջրաղացի, կրպակի, մսի վաճառքի մենաշնորհներից, արօտատեղիներից, խոտահարքներից և այլն),
ե. Դպրոցական ֆոնդից,
զ. Կամաւոր նուէրներ, նպաստներ հաստատութիւններից և անհատներից,
է. և այլ պատահական եկամուտներ։

7. Միդասեան դպրոցը երկդասեան դարձնելու, կամ գոյութիւն ունեցող դպրոցի դասարանների թիւը աւելացնելու դէպքում, համայնքն այդ մասին յայտնում է թեմական իշխանութեան ի գիտութիւն, իսկ երկդասեան դպրոցը միդասեանի վերածելու, կամ գոյութիւն ունեցող դասարանների թիւը կրճատելու կամ փակելու դէպքում համայնքը խնդրում է թեմական իշխանութեան թոյլտուութիւնը։

8. Եկեղեցական-ծխական դպրոցն ունի իւր պաշտօնական կնիքը սահմանուած ձևով։

Բ.

ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴ.

9. Առաջնորդը հսկում է իւր թեմի եկեղեցական ծխական դպրոցների վրայ և պատասխանատու է Ամենայն Հայոց Կաթուղիկոսի առաջ։

10. Առաջնորդը իւրաքանչիւր դպրոցի բացման մասին զեկուցանում է Վեհափառ Կաթուղիկոսին և խնդրում հաստատութեան կոնդակ։

11. Առաջնորդը յատուկ զեկուցագրեր է ներկայացնում Ամենայն Հայոց Կաթուղիկոսին ամեն մի դպրոցի փակման պատճառների մասին անմիջապէս։

12. Առաջնորդն ընտրում է մի կամ մի քանի թեմական Տեսուչներ և ներկայացնում է Ամենայն Հայոց Կաթուղիկոսին ի հաստատութիւն։

13. Առաջնորդը թեմի դպրոցական բոլոր գործերը վարում է թեմական Տեսչի կամ Տեսուչների միջոցով։

14. Առաջնորդը հաստատում է աւագ ուսուցիչներին, դասատուներին և հոգաբարձուներին, իսկ ծխական ժողովից ընտրուած դպրոցի խնամակալներին կամ պատուաւոր հոգաբարձուներին ներկայացնում է Ամենայն Հայոց Կաթուղիկոսին ի հաստատութիւն։

Ծանօթ. Առաջնորդը աւագ-ուսուցչի և դասատուների ընտրութեան վճռի մասին իւր որոշումը հաղորդում է հոգաբարձութեան արձանագրութիւնն ստանալու օրից երկու շաբաթուայ ընթացքում, իսկ տարեմիջին ինքնակամ հեռացող ուսուցչի մասին անում է առանձին կարգադրութիւն։

15. Առաջնորդը քննում ու հաստատում է դպրոցական նախահաշիւն ստանալուց տասն օրուայ ընթացքում, իսկ նախորդ տարուայ ել և մտից հաշիւը երեք ամսուայ ընթացքում։

16. Առաջնորդը քննում և լուծում է դպրոցական մարմինների ու պաշտօնեաների միջև ծագած տարաձայնութիւնները և նրանց դէմ եղած բողոքները, նախապէս թեմական տեսչից զեկուցում կամ բացատրութիւն ստանալով։

17. Առաջնորդը կարևոր դէպքերում դպրոցական խնդիրների վերաբերմամբ հրահանգներ է տալիս համաձայն սոյն կանոնադրութեան սահմանների և զեկուցանում է Վեհափառ Կաթուղիկոսին։

18. Առաջնորդը ամեն ուսումնական տարուայ վերջում ուսումնական և տնտեսական տեղեկագիր և զեկուցում է ներկայացնում Ամենայն Հայոց Կաթուղիկոսին թեմի բոլոր եկեղեցական ծխական դպրոցների մասին։

Գ.

ԹԵՄԱԿԱՆ ՏԵՍՈՒՉ.

19. Թեմական Տեսուչները պէտք է ունենան առնուազն միջնակարգ կրթութիւն և հինգ տարուայ մանկավարժական փորձառութիւն, իսկ բարձրագոյն կամ մանկավարժական մասնագիտական կրթութիւն ստացած անձինք՝ երեք տարուայ ուսուցչական փորձառութիւն։

20. Թեմական Տեսուչը հետևում է, որ ընդունուած դպրոցական ծրագիրն ու կանոնադրութիւնը և հրահանգները ճշտութեամբ գործադրուեն. չգործադրուելու կամ

շեղումների դէպքում պէտք է ուղղութիւն տայ և ի հարկին զեկուցանէ թեմական իշխանութեան։

Ծանօթ. Թեմական տեսուչը դպրոցի կրթական և վարչական վիճակի մասին իւր դիտողութիւններն արձանագրում է յատուկ ժապաւինեալ մատեանի մէջ, որ պահւում է դպրոցում։

21. Թեմական տեսուչը դպրոցներն այցելում է տարին առնուազն երկու անգամ, մանրամասն ծանօթանում իւրաքանչիւր դպրոցի կրթական, վարչական, առողջապահական դրութեան հետ և համապատասխան հրահանգներ է տալիս, իսկ տնտեսական խնդիրների մասին ծանօթանում և զեկուցանում է թեմական իշխանութեան։

22. Թեմական տեսուչը իւր այցելութիւնների միջոցին ըստ հնարաւորութեան կազմակերպում է փորձնական դասեր։

23. Հարկ եղած դէպքում թեմական տեսուչը հրաւիրում է մանկավարժական, հոգաբարձական և խառն ժողովներ իւր նախագահութեամբ։ Իսկ ծխական ժողովներ՝ համաձայն Ծխ. Կանոնադրութեան 8-րդ յօդուածի Ա. կետի։

24. Թեմական տեսուչը քննութեան է ենթարկում ուսուցչական խմբերի, հոգաբարձութիւնների մէջ ծագած թիւրիմացութիւնները, վէճերը, նոյնպէս և հոգաբարձութեան և ուսուցիչների միջև առաջացած անհամաձայնութիւնները և, եթէ անձամբ չի կարողանում վերջ տալ այդ խնդիրներին, զեկուցանում է թեմական իշխանութեան։

25. Թեմական տեսուչը հետևում է, որ ուսուցիչները կանոնաւոր ստանան իրենց հասանելի ռոճիկները։

26. Թեմական տեսուչը պէտք է հոգայ, որ գիւղերի որոշ խմբակցութիւններ ունենան մի մի կենտրոնական վեցամեայ դասընթացով դպրոց։ (յօդ. 4)

27. Թեմական տեսուչը իւր բոլոր գործողութիւնների մասին պարբերաբար զեկուցումներ է ներկայացնում թեմական իշխանութեան, իսկ ուսումնական տարուայ վերջը՝ ընդհանուր զեկուցում և տեղեկագիր։

28. Թեմական տեսուչը այցելում է դպրոց չունեցող վայրերը և ամեն կերպ աշխատում է բանալ նոր դպրոցներ։

29. Թեմական տեսուչն ունի կնիք և պահում է իւր դիւանը։

Ծանօթ. Դիւանի գործերը երեք տարուց յետոյ, եթէ կարևորութիւնն անցնում է, յանձնում է թեմական իշխանութեան։

Դ.

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ.

30. Դպրոցական հոգաբարձութիւնն է նոյն եկեղեցական-ծխական հոգաբարձական մարմինը, որ բաղկացած է 2—4 անդամներից, երկու անձնափոխանորդներից և եկեղեցու երեսփոխանից հաւասար իրաւունքներով ու պատասխանատուութեամբ և պաշտօնավարում է երեք տարի։ (տես Ծխական Կանոնադրութեան 36 յօդ.)։

31. Հոգաբարձութիւնը իւր միջից ընտրում է նախագահ, նաև ընտրում կամ հրաւիրում է քարտուղար՝

Ծանօթ. ա. Հոգաբարձական բոլոր վճիռները կայանում են ժողովով և արձանագրւում են։

Ծանօթ. բ. Հոգաբարձութիւնը պահում է բոլոր

ստացուած գրութիւններն և իւր արձակած թղթերի պատճէնները, ինչպէս նաև ել և մտից մատեան։

32. Հոգաբարձութիւնը տարեկան մուտքի և ելքի նախահաշիւ է կազմում և ծխական ժողովի վաւերացումն ստանալուց յետոյ մինչև յունիսի 10-ը ուղարկում է թեմական իշխանութեան ի հաստատութիւն։

33. Հոգաբարձութիւնն իւրաքանչիւր ուսման տարուայ վերջին իւր հաշիւները մուտքի և ելքի փաստաթղթերի հետ միասին յանձնում է ի քննութիւն ծխական ժողովի կողմից ընտրուած վերատուգիչ յանձնաժողովին, և այդ քննութիւնը ծխական ժողովի արձանագրութեան հետ միասին ուղարկում է թեմական իշխանութեան։

34. Հոգաբարձութիւնը ստանում է Առաջնորդից երեք ժապաւենեալ մատեան, որոնցից մէկի մէջ արձանագրում է դպրոցի մուտքն ու ելքը, միւսի մէջ՝ դպրոցի կահկարասիքը (ինվենտար), իսկ երրորդի մէջ՝ իւր ժողովների արձանագրութիւնները։

35. Հոգաբարձութիւնը պարտաւոր է համաձայն դպրոցի կարողութեան նախահաշուի մէջ մտցնել և գործադրել իւրաքանչիւր տարի դրադարանի և դասական պիտոյքների համար ի նկատի առնուած ծախքերը։

36. Հոգաբարձութիւնը պարտաւոր է հոգ տանել դպրոցի շէնքի և աշակերտների առողջապահական պայմանների մասին, ըստ հնարաւորութեան հրաւիրել բժիշկ և պահել տնային դեղատուն։

Ծանօթ. Դպրոցական բժիշկը դպրոցական-առողջապահական խնդիրներում մանկավարժական և հոգաբարձական ժողովներին մասնակցում է ձայնի իրաւունքով։

37. Հոգաբարձուներն իրաւունք ունին ներկայ լինե-

լու դասերին, ստուգումներին և քննութիւններին առանց միջամտութեան և նկատողութիւնների. իրենց դիտողութիւնների մասին խորհրդակցում են աւագ-ուսուցչի կամ ուսուցչի հետ, իսկ չբաւարարուելու դէպքում յայտնում են թեմական տեսչին։

38. Հոգաբարձութիւնը թեմական Առաջնորդի կարգադրութիւնը ստանալուց մի ամսուայ ընթացքում (տես. յօդ. 14-ի ծանօթութիւնը) ընտրում է աւագ ուսուցիչ Հոգևոր Ծայրագոյն Իշխանութեան հրատարակած ուսուցչական ցուցակից և ներկայացնում է թեմական Առաջնորդի հաստատութեան։ Միւս ուսուցիչներին և վերակացուներին, բացի նոյն դպրոցում արդէն պաշտօնի մէջ գտնուող դասատուներից, հոգաբարձութիւնը և աւագ ուսուցիչը ընտրում են փոխադարձ համաձայնութեամբ՝ առաջարկած թեկնածուներից մինչև օգոստոսի 1-ը և ներկայացնում թեմական իշխանութեան ի հաստատութիւն։

Ծանօթ. Ուսուցչական ցուցակի մէջ չեղած թեկնածուին առաջարկելիս հոգաբարձութիւնն ուղարկում է թեմական Առաջնորդին թեկնածուի վկայագրի վաւերացրած պատճէնը։

39. Հոգաբարձուն չի կարող նոյն դպրոցում աւագ-ուսուցիչ, դասատու և վերակացու լինել։

40. Հոգաբարձութիւնը ոչ ուշ քան մինչև յունիսի 10-ը պատճառաբանուած յայտարարութիւն է ուղարկում թեմական տեսչին և մանրամասն բացատրում այն պատճառները, որոնցով ցանկալի չի համարում աւագ ուսուցչի կամ դասատուի պաշտօնավարութիւնը և խնդրում է իւր որոշման հաստատութիւնը թեմական իշխանութիւնից։

Ծանօթ. Առաջնորդը նախ քան հոգաբարձութեան վճռի հաստատելը բացատրութիւն է պահանջում ամբաստանեալից։

41. Հոգաբարձութիւնը հսկում է, որ աւագ ուսուցիչը և միւս դպրոցական պաշտօնեաները ճշտութեամբ կատարեն իրենց պարտաւորութիւններն և իւր նկատած զանցառութիւնների մասին յայտնում է թեմական տեսչին։

42. Հոգաբարձութիւնն աւագ ուսուցչի և ուսուցիչների տարեկան ռոճիկը բաշխում է 12 հաւասար մասի և վճարում է իւրաքանչիւր ամիս ոչ ուշ քան ամսուայ վերջը։

Ծանօթ. Մէկ կամ երկու ուսուցիչ ունեցող գիւղական դպրոցի հոգաբարձութիւնը աւագ ուսուցիչների և ուսուցիչների տարեկան ռոճիկը բաշխում է լինն հաւասար մասի և վերջին ամսականը վճարում է դպրոցական պարապմունքների աւարտին։

43. Հոգաբարձութիւնն անհրաժեշտ դէպքում արձակուրդ է տալիս աւագ ուսուցչին, ուսուցիչներին և վերակացուին մինչև եօթն օր, իսկ աւելի երկար ժամանակի համար դիմում է թեմական Առաջնորդին։

44. Հոգաբարձութիւնը որոշում է թոշակաւոր և ձրիավարժ աշակերտ-աշակերտուհիներին, թոշակի քանակը և ստացման ժամանակները։

Ծանօթ. Թոշակների զանձման եղանակը որոշուում է հոգաբարձութեան և աւագ ուսուցչի փոխադարձ համաձայնութեամբ։

45. Պաշտօնավարութիւնը լրացրած հոգաբարձութիւնը պարտաւոր է դպրոցական բոլոր հաշիւներն ու գործերը, մնացած դումարն ու կահ-կարասիքը յանձնել նորահաստատ հոգաբարձութեան։ (Մխ. Կան. յ. 42)

46. Հոգաբարձութեան ներկայացուցիչը մասնակցում է մանկավարժական ժողովներին ձայնի իրաւունքով։

47. Հոգաբարձութիւնը առնուազն ամիսը մի անգամ նիստ է գումարում։

Ե.

ԱՒԱԳ — ՈՒՍՈՒՑԻՉ.

48. Աւագ-ուսուցիչը կամ աւագ-ուսուցչուհին ընտրւում է ուսուցչական ընդհանուր ցուցակի մէջ նշանակուած և առնուազն եռամեայ դպրոցական փորձառութիւն ունեցող անձերից։

Ծանօթ. ա. Եռամեայ փորձառութիւն չունեցողները հրաւիրւում են որպէս պաշտօնակատար աւագ ուսուցչի։

Ծանօթ. բ. Երկուսից ոչ աւելի ուսուցիչ ունեցող դպրոցների համար բացառութիւն է լինում։

49. Աւագ-ուսուցիչը պաշտօնից արձակւում է համաձայն յօդ. 40-ի։

50. Աւագ-ուսուցիչը պաշտօն ստանձնելիս ցուցակով ստանում է դպրոցական բոլոր գործերն ու իրերը հոգաբարձութիւնից և նոյն կարգով յանձնում է պաշտօնը թողնելու ժամանակ։

51. Աւագ-ուսուցիչը մասնակցում է ուսուցչի ընտրութեանը համաձայն 38 յօդուածի։

52. Աւագ-ուսուցիչն է դպրոցի մերձաւոր հսկողը ըստ կրթական և վարչական մասերի։ Նա —

ա. Նախագահում է մանկավարժական խորհրդին։

բ. Վերահսկում է ծրագրի, թեմական Առաջնորդի, թեմական Տեսչի, մանկավարժական ժողովների որոշումների ճիշտ գործադրութեան և դպրոցական օրագրական ու դասարանական այլ և այլ մատեանների կանոնաւոր վարման։

գ. Պահանջում է ուսուցիչներից անցած նիւթի մասին կիսամեայ ծրագիր դեկտեմբ. 15-ին և տարեկան ծրագիր՝ մայիսի 15-ին։

դ. Վերահասու է լինում դասաւանդութեան և յաճախում է ուսուցիչների դասերին, վերահսկում է դաստիարակութեան և կարգապահութեան, խորհրդակցում է դասատուների, դաստիարակների, վերակացուների, ինչպէս նաև ծնողների հետ, կարևոր խնդիրները մանկավարժական կամ հոգաբարձական ժողովների խորհրդակցութեան առարկայ է դարձնում։

ե. Թեմական տեսչին և հոգաբարձութեանը ներկայացնում է միամեայ ընդարձակ տեղեկագիր դպրոցի ուսումնական և բարոյական կեանքի կարևոր երևոյթների վերաբերեալ՝ բացատրութեամբ հանդերձ, ուսման տարուայ վերջը՝ մինչև յունիսի 5-ը։

զ. Աւագ-ուսուցիչը պարտաւոր է դպրոցում դասեր ունենալ ըստ կարելւոյն սահմանափակ թուով (միդասեան դպրոցում շաբաթական առ առաւելն 20, իսկ երկդասեանում՝ 18,) և առաջին դասի սկզբից մինչև պարապմունքների վերջը դպրոցում լինել։

է. Աւագ-ուսուցիչը պարտաւոր է ազատ ժամերին բոլոր ուսուցիչների աւանդած բոլոր առարկաներին ներկայ լինել, երբեմն նոյնիսկ իւր և միւս դասատուների օրուայ դասերի ընթացքի մէջ փոփոխութիւն մացնելով և դասերի այցելելու մասին արձանագրում է օրագրական մատեանում։

ը. Հսկում է, որ աշակերտները կանոնաւոր յաճախեն դասերին։

թ. Հսկում է, որ դասատուները առանց յարգելի պատ-

ճառի և նախապէս յայտնելու չբացակայեն։

ժ. Դպրոցական կեանքի մէջ պատահած ամեն մի արտակարգ դէպքի մասին պարտաւոր է անմիջապէս զեկուցանել հոգաբարձութեան, մանկավարժական ժողովին և հարկ եղած դէպքում նաև թեմական տեսչին։

ժա. Հոգում է պատրաստելու ուսման աւարտման վկայականները և հոգաբարձութեան նախագահի, իւր և մանկավարժական ժողովի քարտուղարի ստորագրութեամբ, դպրոցական կնքով վաւերացնելով, պատճէնները դպրոցական յատուկ մատեանի մէջ մտցնելուց յետոյ, տալիս է ծնողներին կամ խնամակալներին, ստացողի ստորագրութեամբ նոյն մատեանում։

ժբ. Աւագ-ուսուցիչը պարտաւոր է հոգաբարձական ժողովներում պարբերաբար զեկուցումներ տալ դպրոցի յառաջադիմութեան և առհասարակ ընդհանուր վիճակի մասին, իսկ տարուայ վերջը ծխականների առաջ և տարեկան ակտի մէջ կարդալ դպրոցի մասին ընդհանուր ուսումնական տեղեկագիր։

53. Աւագ-ուսուցիչը ներկայ է լինում հոգաբարձական ժողովներին՝ դպրոցին վերաբերեալ խնդիրներում ձայնի իրաւունքով։ (Ծխակ. կանոնադր. 40 յօդ.)

Ծանօթ. Տնտեսական խնդիրների քննութեան և լուծման ժամանակ աւագ ուսուցիչը մասնակցում է խորհրդակցական ձայնով։

54. Աւագ ուսուցիչը մինչև երեք օր արձակուրդ է տալիս դասատուներին, հոգում է բացակայող ուսուցչի ազատ դասերի համար և զեկուցանում է հոգաբարձութեան ի գիտութիւն։

55. Աւագ ուսուցիչը հոգաբարձութեան թոյլտուութեամբ միայն եօթ օր բացակայելու դէպքում ինքն է նշանակում իւր պաշտօնակատարին և յայտնում հոգաբարձութեան ի գիտութիւն։

56. Աշակերտութեան մէջ որ և է արտակարգ դէպք պատահելիս աւագ ուսուցիչն իրաւունք ունի դիմել վարչական միջոցների և ժամանակաւորապէս կարող է հեռացնել աշակերտին, անմիջապէս հրաւիրելով մանկավարժական ժողով խորհրդակցելու և որոշում կայացնելու։

57. Ուսուցիչների մէջ ծագած թիւրիմացութիւնների և վէճերի դէպքում աւագ ուսուցիչը ամեն կերպ աշխատում է վերջ տալ, իսկ չյաջողուելու դէպքում պաշտօնապէս զեկուցանում է հոգաբարձութեանը և թեմական տեսչին։

Զ.

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ.

58. Մանկավարժական խորհուրդը կազմում է դպրոցի բոլոր ուսուցիչներից, վերակացուներից և դպրոցական բժշկից՝ աւագ ուսուցչի նախագահութեամբ։

59. Մանկավարժական ժողովները լինում են հերթական և արտակարգ։ Հերթական ժողովները գումարւում են առնուազն երկու շաբաթը մի անգամ։

60. Մանկավարժական խորհրդի զբաղման խնդիրներն են.

ա. Աշակերտների ընդունելութիւնը.

բ. Աշակերտների փոխադրութեան, վերաքննութեան, մնալու և աւարտման խնդիրները։

գ. Տետրակների և այլ դասական պիտոյքների, աշա-

կերտական և հիմնական դրադարանների գրքերի ընտրությունը.

դ. Դասագրքեր ընտրելու խնդիրը քննում է մանկավարժական ժողովը։

Ծանոթ. ա. Եթէ դասատուն համաձայն չէ մանկավարժական ժողովի որոշման հետ, դասատուի պատասխանատուութեամբ են ընտրում դասագիրքը։

Ծանոթ. բ. Դասագրքերը ընտրում են միմիայն Ծայր. Հոգևոր իշխանութեան ընդունած դասագրքերից։

ե. Պարբերական խորհրդակցութիւն աշակերտների ուսման, ընթերցանելի գրքերի (ըստ դասարանների), դաստիարակութեան, կարգապահութեան, առողջապահութեան և հերթական խնդիրների մասին։

զ. Իւրաքանչիւր բաժանմունքի համար դաստիարակներ ընտրելու խնդիրը։

է. Դպրոցական երեկոյթներ, ցերեկոյթներ, մանկական ներկայացումներ, զբօսանքներ կազմակերպելը. իսկ էքսկուրսիաներ և ծնողական ժողովներ կազմակերպելիս նախապէս խորհրդակցում է հոգաբարձութեան հետ։

ը. Քննութիւն տարեկան տեղեկագրի ուսումնական մասի։

թ. Մանկավարժական ժողովն ընտրում է իւր միջից քարտուղար։

Гос. Публ. Библиотека СССР им. А. Мясникяна

Է.

ՈՒՍՈՒՑԻՉ—ՈՒՍՈՒՑԻՉՈՒՀԻ.

61. Ուսուցչական իրաւունք ունի այն անձը, որի անունը մուծուած է Վեհափառ Կաթուղիկոսից հաստատուած ընդհանուր ցուցակի մէջ։

Ծանոթ. Այն անձը, որ իւր վկայականով արտօնուում է ուսուցչութեան, բայց ժամանակ չի ունեցել իւր անունը ընդհանուր ցուցակի մէջ մուծել տալու, կարող է ուսուցիչ հրաւիրուել Առաջնորդի գիտութեամբ։ (Տես 38 յօդ. ծան.)

62. Աւագ ուսուցիչը և ուսուցիչները հրաւիրուում են անորոշ ժամանակով։

63. Ուսուցիչը ուսման տարուայ վերջին պաշտօնից հրաժարուելու դէպքում պարտաւոր է հրաժարագիր ներկայացնել հոգաբարձութեան և թեմական Առաջնորդին մինչև յուլիսի 1-ը ի գիտութիւն։

64. Ուսուցչի կամ ուսուցչուհու հիւանդութեան կամ օրինական պատճառներով ստիպողաբար բացակայելու դէպքում նրա դասերը բաշխուում են միւս ուսուցիչների մէջ ձրիաբար մինչև երկու ամիս, իսկ հիւանդութեան աւելի երկար տևելու դէպքում՝ ռոճկի կէսն ստանում է հիւանդը, իսկ միւս կէսը՝ նրա փոխարէն պարապողները մինչև տարուայ վերջը։

Ծանոթ. Եթէ միջոցները ներում են, հոգաբարձութիւնը հիւանդ ուսուցչին տալիս է ամբողջ ռոճիկը։

65. Ուսուցիչը կարող է ստանձնել շաբաթական ոչ աւելի քան 24 դաս, բացի այն դէպքերից, երբ դպրոցն ունի ընդամէնը մէկ կամ երկու դասատու։

1047
3/874

ՀԱՅ ՀԱՅՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
СССР Публичная Библиотека
7 7 22
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Ծանոթ. Հոգաբարձութիւնը մի ուսուցչի այս չափից աւելի դասեր տալու ծայրայեղ դէպքերում բացառութիւն է տալիս թեմական տեսչին։

66. Ուսուցիչը հրաւիրւում է դասերի որոշ թուով։ Հետևեալ տարին դասերի մէջ առաջ եկած փոփոխութեան դէպքում, ուսուցչի դասերի թիւը կարող է պակասել $^1/_6$-ից ոչ աւելի, բացի դասարան փակուելու դէպքից։

Ը.

ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ԵՒ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐ.

67. Եկեղեցական-ծխական դպրոց մտնելու ցանկութիւն ունեցողների խնդիրները տրւում են հոգաբարձութեան, ներկայացնելով ծննդեան վկայական կամ քաղուածք և հնարաւոր դէպքում՝ ծաղկի պատուաստման վկայական։

68. Աշակերտների ընդունելութիւնը լինում է ուսման տարուայ սկզբին, յունվարին և տարեվերջին, իսկ արտակարգ դէպքերում՝ նաև տարուայ ընթացքում՝ վարչութեան թոյլտուութեամբ։

69. Եկեղեցական-ծխական դպրոցների առաջին բաժանմունք կարող են մտնել 7-ից ոչ պակաս և 9-ից ոչ աւելի հասակ ունեցողները։

70. Յետաճնաց աշակերտ-աշակերտուհիները կարող են մի տարի ևս մնալ նոյն դասարանում։

Ծանոթ. Հիւանդութեան և այլ յարգելի պատճառներով յետաճնացներին մանկավարժական խորհուրդը կարող է աւելի ժամանակ տալ։

71. Ամեն մի բաժանմունքի աշակերտների թիւը 50-ից աւելի չպէտք է լինի, իսկ եթէ հարկ լինի մի սենեակում

միաւորեալ մի քանի բաժանմունք տեղաւորել, այս դէպքում ընդհանուր թիւը 65-ից չպէտք է անցնի։

72. Աշակերտները վճարում են թոշակ։

Ծանոթ. Վկայուած չքաւոր աշակերտ-աշակերտուհիները ազատւում են թոշակից հոգաբարձութեան կարգադրութեամբ։

Թ.

ՈՒՍՈՒՄՆ.

73. Հայոց եկեղեցական-ծխական դպրոցների համար պարտադիր են այն բոլոր ուսմունքները, որոնք սահմանուած են Ամենայն Հայոց Կաթուղիկոսի հրատարակած առանձին ծրագրով։

Ծանոթ. Ծրագրով սահմանուած ուսմունքներից դուրս որ և է ուսմունք կամ արհեստ աւանդելու դէպքում անհրաժեշտ է ստանալ թեմական իշխանութեան միջնորդութեամբ Վեհափառ Կաթուղիկոսի թոյլտուութիւնը։

74. Առարկաների դասաւանդութիւնը լինում է հայոց լեզուով, բացի ռուսաց լեզուից, ռուսաց պատմութիւնից և ռուսաստանի աշխարհագրութիւնից, որոնք ռուսաց լեզուով են աւանդւում։

75. Ուսումը սկսում է սեպտեմբերի 1-ին և ստուգումների և այլ պարապմունքների հետ միասին վերջանում է մայիսի 31-ին։

Ծանոթ. ա. Աշակերտների ընդունելութիւնը, վերքննութիւններն ու քննութիւնները վերջանում են մինչև սեպտեմբերի 1-ը։

Ծանոթ. բ. Ըստ տեղական կլիմայական և այլ

պայմանների ուսման ժամանակամիջոցի ընդհանուր տևողության մէջ փոփոխութիւն մտցնելու համար հրատարակուելու են առանձին հրահանգութիւններ։

76. Դպրոցական տօները լինում են Ամենայն Հայոց Կաթուղիկոսի կողմից տրուած առանձին ցուցակի համաձայն։

77. Դասերը տևում են 45-ական րոպէ։

Ծանօթ. ա. Դասերը սկսւում են նայելով տարուայ եղանակներին և տեղական պայմաններին 8-ից մինչև 9 ժամը, իսկ այս սահմանից դուրս ժամերի փոփոխութիւնը լինում է թեմական իշխանութեան թոյլտրութեամբ։

Ծանօթ. բ. Դասամիջոցների տևողութիւնը 10—15 րոպէ, իսկ մեծ դասամիջոցինը՝ 25—30 րոպէ, համաձայն թեմական իշխանութեան որոշման։

ՀԱԽՍՀ ՀԱՅԿԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/3 1922
Имени А. Мясн...
Ա. ՄՅԱՍ Ի ՅԱՆԻ ԱՆՎԱՆ

«Ազգային գրադարան»
NL022975

50. 328